Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-999²-20.01.2025-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» 1995 թվականի նոյեմբերի 7-ի ՀՕ-18 օրենքի 10-րդ հոդվածում՝ վերնագրից և տեքստից հանել «(մշտական)» բառը, իսկ տեքստում «հողերը» բառից հետո լրացնել (բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերի) բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-999²-20.01.2025-ՏՏԳՇ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ
ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» 1995 թվականի նոյեմբերի 7-ի ՀՕ-18 օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~՝ 10-րդ հոդվածում՝ վերնագրից եւ տեքստից հանել «(մշտական)» բառը, իսկ տեքստում «հողերը» բառից հետո լրացնել (բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերի) բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-999-20.01.2025-ՏՏԳԾ-011/0*) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը համապատասխանեցնել ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ««Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությամբ կատարվող լրացմանը և Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքի 89-րդ հոդվածում լրացվող նոր՝ 1.1-ին մասին: Հաշվի առնելով վերագրյալը նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է, լրացվել է նաև նոր 2-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝ «**Հոդված 1.** «Պետական գույքի կառավարման մասին» 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ 1) «մարմիններին» բառից հետո լրացնել «և կազմակերպություններին» բառերը. 2) հանել «և օտարման առաջարկվող» բառերը: **Հոդված 2.** Օրենք 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում՝ 1) «մարմիններին» բառից հետո լրացնել «և կազմակերպություններին» բառերը. 2) հանել «և օտարման առաջարկվող» բառերը:»		

2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված պահանջը, առաջարկում ենք 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդվածում «ենթաօրենսդրական ակտերը» բառերի փոխարեն լրացնել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	***Նախագծի վերնագրում «փոփոխություն» բառն առաջարկում ենք փոխարինել «փոփոխություններ և լրացումներ» բառերով՝ հաշվի առնելով, որ նախագծում կատարվում են և՛ փոփոխություններ և՛ լրացումներ:***	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում կիրառված «(այսուհետ՝ Օրենք)» ձեւակերպումը հանել:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
ՓԱԹԵԹԸ ԼՐԱՑՎԵԼ Է ՆՈՐ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված	Ընդունվել է:	Ընդունվել է:

			««Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությունում կատարվող լրացմանը և Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքի 89-րդ հոդվածում լրացվող նոր՝ 1.1-ին մասը անհրաժեշտ է իրավակարգավորումների համապատասխանություն նաև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին՝ համաձայն որի համայնքի ղեկավարի պետության պատվիրակած լիազորությունների շարքում նշվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օգտագործման տրամադրելու համայնքի ղեկավարի լիազորությունը: Առաջարկում ենք «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում ևս «եւ օտարման առաջարկվող» բառերը հանել՝		

			իրավակարգավորումների համապատասխանությունը միմյանց ապահովելու նպատակով: Հաշվի առնելով վերագրյալը փաթեթը լրացվել է նոր նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ. «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում՝ 1) «մարմիններին» բառից հետո լրացնել «և կազմակերպություններին» բառերը. 2) հանել «և օտարման առաջարկվող» բառերը: Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:		